Հասարակագիտական հետազոտությունների ամառային դպրոց «Քանակական հետազոտություն. ընտրանք, տվյալների վերլուծություն և վիզուալացում» թեմայով

Օգոստոսի 2-6, 2019

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը հրավիրում է «Քանակական հետազոտություն. ընտրանք, տվյալների վերլուծություն և վիզուալացում» հետազոտական ամառային դպրոցին, որը տեղի կունենա օգոստոսի 2-ից 6-ը, Երևանում:

ԱԿՆԱՐԿ

Հետազոտական դպրոցի մասնակիցները կծանոթանան քանակական հետազոտություն իրականացնելու սկզբունքներին և մեթոդներին, ընտրանքի տեսությանը, տվյալների վերլուծությանը SPSS ծրագրային փաթեթով, ինչպես նաև հետազոտության արդյունքների վիզուալացմանն ու հանրայնացմանը:
Դպրոցը հագեցած է լինելու պրակտիկ և խմբային աշխատանքով և կծանոթացնի մասնակիցներին քանակական տվյալների վերլուծության SPSS ծրագրային փաթեթին:

Ո՞ԻՄ ՀԱՄԱՐ Է ԴՊՐՈՑԸ

Ամառային դպրոցը նախատեսված է հասարակական կազմակերպությունների, վերլուծական կենտրոնների, պետական մարմինների երիտասարդ հետազոտողների համար, ովքեր ցանկանում են հմտանալ կիրառական բնույթի հասարակագիտական հետազոտություններում: Ցանկալի է, որ դիմորդները ունենան հասարակագիտական կրթություն, քանակական տվյալների վերլուծության նախնական գիտելիքներ և համակարգչային հմտություններ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ամառային դպրոցը կտևի 5 օր՝ օգոստասի 2-ից 6-ը՝ 10:00-ից 18:00-ը: Մասնակցությունը անվճար է:
Գրանցման հայտի համար այցելեք ԱՅՍՏԵՂ, իսկ օրակարգին ծանոթանալու համար՝ ԱՅՍՏԵՂ:
Դպրոցի աշխատանքային լեզուն հայերենն է: Անգլերենի իմացությունը ցանկալի է՝ անգլերենով տրամադրվող գրականության և նյութերի յուրացման համար:
Ամառային դպրոցի ակտիվ մասնակիցներին կտրվեն հավաստագրեր:
Գրանցման հայտը լրացնելու **վերջնաժամկետը հուլիսի 25-ն է**:

ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐ

ԱՐՓԻՆԵ ՓՈՐՍՈՒՂՅԱՆ

Հետազոտական հարցի և վարկածների ձևավորում, հետազոտության կառուցվածք

Արփինե Փորսուղյանը աշխատում է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրում որպես Մոնիտորինգի և գնահատման պատասխանատու: Տվյալների հավաքագրման ջատագով է և վերջին տասնամյակում Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Ռուսաստանում, Բելառուսում և ԱՄՆ-ում իր հետազոտությունների միջոցով աջակցում է տեղեկատվության վրա հիմնված քաղաքականության և ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

ՍՈՆՅԱ ՄՍՐՅԱՆ

Տվյալների վերլուծություն SPSS ծրագրային փաթեթով

Սոնյա Մսրյանը ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ է՝ սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդիկա մասնագիտացմամբ: Նա վերջին հինգ տարիների ընթացքում որպես վերլուծաբան ներգրավված է եղել մի շարք հետազոտական ծրագրերում՝ համագործակցելով տարբեր հետազոտական կենտրոնների և հասարակական կազմակերպությունների հետ, այդ թվում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի, «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի հետ: Ունի SPSS վերլուծական փաթեթի դասավանդման փորձ:

ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զանգվածային սոցիոլոգիական հետազոտությունների ընտրանքը

Սամվել Մանուկյան, սոց. գ. թ. «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդիկա» մասնագիտությամբ: Ունի կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների 20-ամյա փորձ և 200-ից ավելի գիտական աշխատանք: Առաջին մասնագիտությամբ՝ ինժեներ-սիստեմատեխնիկ: Աշխատել է արհեստական բանականության ոլորտում, ունի 5 գիտական աշխատանք: Գիտական հետաքրքրությունների ոլորտները՝ քաղաքական և քաղաքացիական մշակույթ, քաղաքակրթական ինքնություն և աշխարհայացքային համալիրներ, կրոնական գիտակցություն, արժեքներ և նորմեր, երիտասարդության հետազոտություններ, ժողովրդագրություն, ինֆորմացիոն դաշտ և ինֆորմացիոն վարք:

ԱՐԹՈՒՐ ԽԱԼԱԹՅԱՆ

Մեծ տվյալներ

Արթուր Խալաթյանը ավարտել է Լոնդոնի Տնտեսագիտության և Քաղաքագիտության դպրոցի, կառավարման ֆակուլտետի «Տեղեկատվական Համակարգերի Կառավարում և Թվային Նորարարություն» մագիստրոսական բաժինը: Այժմ դասավանդում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Բնագիտության և Ճարտարագիտության Ֆակուլտետում, իրականացնում է արդյունաբերության հետ համագործակցության ծրագրեր և ղեկավարում է «Հայաստանի Տեխնոլոգիական Ապագան» հետազոտությունը, որի նպատակն է մշակել կրթական, գիտական, արդյունաբերական և նորարարական ոլորտների էկոհամակարգը աշխուժացնելու հնարավորություններ: Հետազոտության արդյունքում ձևավորված նախագծերից մեկով նախատեսվում է արհեստական բանականության նորարարական լաբորատորիա հիմնել ՀԱՀ-ում:

ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հետազոտության արդյունքների հանրայնացումը սոց. ցանցերում

Գեղամ Վարդանյանը կրթությամբ ֆիզիկոս է, մասնագիտությամբ՝ լրագրող: Իր կարիերան սկսել է 1999-ին՝ որպես «Ա1+» հեռուստաընկերության խորհրդարանական թղթակից: Ավելի ուշ՝ 2003-ին, միացել է «Ինտերնյուս» մամուլի աջակցության ՀԿ-ին (այժմ Մեդիա նախաձեռնությունների կենտրոն)՝ որպես լրագրող և Media.am կայքի խմբագիր: Պատրաստել է վավերագրական ֆիլմեր, հատուկ ռեպորտաժներ և ռադիո հաղորդումներ: Սակայն նրա հիմնական մասնագիտացումը ինտերնետային բովանդակության ստեղծումն է: Մշակում է մուդուլներ և անցկացնում դասընթացներ մուլտիմեդիա և քաղաքացիական լրագրություն, մեդիա արշավներ, սոցիալական մեդիա և պատմություններ թվային միջավայրում թեմաներով:

ՍԵԴՐԱԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Տվյալների վիզուալացում

Տվյալների վիզուալացման մասնագետ, տվյալների լրագրող, գրաֆիկական դիզայներ: 2000 թվականից զբաղվում է գրաֆիկական դիզայնով, 2009 թվականից՝ տվյալների վիզուալացմամբ: 2004 թվականից թղթակցել է տարբեր պարբերականների որպես լրագրող, 2011-ից 2014 թվականներին հիմնադրել ու ղեկավարել է emedia.am լրատվական կայքը, որը մասնագիտացած էր տվյալների լրագրության ու ինֆոգրաֆիկայի ոլորտներում: 2013 թվականից Պանարմենիան Մեդիա Գրուպ ընկերության դիզայնի բաժնի ղեկավարն է ու Լրատվական ծառայության գրաֆիկայի թիմի ղեկավարը, 2015 թվականից՝ Infographics.am նախագծի հիմնադիրը: